«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2024 թ. մարտի 11-ի էլեկտրոնային նամակագրությամբ գումարված նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) հոգաբարձուների խորհրդի հիմնադրամի (այսուհետ՝ ՀԽ) նիստը կայացավ առցանց:

Առցանց նիստին վերաբերող նյութերը 2024 թ, մարտի 9-ին ուղարկվել են հոգաբարձուների խորհրդի 19 (տասնինը) անդամներն.

1. Կարեն Թոչունյան, Կ.գ.դ., պրոֆեսոր,
2. Նազելի Բաղդասարյան, ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
3. Արթուր Շատվորյան, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ,
4. Արտուր Մովսիսյան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ,
5. Արթուր Պապիկյան, Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,
6. Լևոն Բարսեղյան, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ,
7. Ջոն Կարապետյան, ՀՀ ԳԱԱ-ի «Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն,
8. Արմեն Թումասյան, «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանիֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի ավագ գիտաշխատող,
9. Բագրատ Ենգիբարյան, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն:
10. Ալեքսան Տեր-Մինասյան, «Ֆյուր Արմենիեն» հիմնադրամի տնօրեն,
11. Լուսինե Գևորգյան, «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դոցենտ,
12. Վարդան Մանուկյան, «ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
13. Աիդա Գարեգինյան, «ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտություններիֆակուլտետի դոցենտ,
14. Աշխեն Տոնոյան, «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոս,
15. Անահիտ Վալեսյան, «ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
16. Լիլիթ Ավետիսյան, «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
17. Մերի Դավթյան, «ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանող,
18. Քրիստինե Առաքելյան, «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
19. Գևորգ Ղուկասյան, «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն որպես ՇՊՀ հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձ (աուդիտոր) ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդում քննարկելու եւ հաստատելու հարցը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Լ.Բարսեղյանը էլեկտրոնային նամակով ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի 19 անդամներին ներկայացրել է ՇՊՀ ռեկտոր Ե.Սերոբյանի նամակը. «Հարգելի՛ պարոն Լևոն Բարսեղյան,

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը և գնումների վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության պահանջները, հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի ընտրության նպատակով մեր կողմից հայտարարվել է մրցույթ: Մրցույթի մասնակիցների հայտերը ներառող փաստաթղթերի փաթեթները բացվել են 29.02.2024 թվականին, որի արդյունքում 1,128,000 (մեկ միլիոն մեկ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն ծառայության գնով հաղթող է ճանաչվել «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն, որի հետ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կնքվելու է աուդիտորական ծառայությունների մատուցման ՈՇՊՀ-ԳՀԾՁԲ-24/1 պայմանագիրը: Հարկ ենք համարում նշել, որ նախահաշվային գինը, ներառյալ ԱԱՀ-ն կազմել է 1,200,000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ պարտավոր ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մինչև 11.03.2024թ.-ը, խնդրում ենք Ձեզ «ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջիկա նիստը գումարել մինչև 10.03.2024թ.-ը և դրա օրակարգում ընդգրկել հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) ընտրության հարցը: Կից ներկայացնում ենք գնահատող հանձնաժողովի 29.02.2024թ. նիստի N 2 արձանագրությունը:»

ՇՊՀ ՀԽ նախագահը ՀԽ անդամներին էլեկտրոնային նամակով հաղորդել է նաեւ հետեւյալը.-Հաշվի առնելով վերոհիշյալը, առաջնորդվելով ՇՊՀ կանոնադրությամբ. այս նամակով հեռավար նիստ եմ հրավիրում էլեկտրոնային քվեարկության դնելով՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն որպես ՇՊՀ հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձ (աուդիտոր) հաստատելու հարցը:

Այս նպատակով մինչև 2024 թ. մարտի 11-ը ժամը 13-ը սահմանում եմ հնարավոր հարցերի ժամկետ: Դրանց պատասխանելու ժամկետ սահմանում եմ մինչև 2024 թ. մարտի 11-ը ժամը 15:00-ն: Որոշմանը քվեարկելու վերջնաժամկետ սահմանում եմ մարտի 11-ը, ժամը 17:00-ն: Ովքեր հարցեր չունեն, կարող են քվեարկել, երբ կամենան՝ մինչեւ մարտի 11-ը, ժամը 17-ը:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 15 (Լ.Բարսեղյան, Ա.Մովսիսյան, Լ.Գևորգյան, Ա.Գարեգինյան, Վ.Մանուկյան, Ա.Վալսեյան, Լ.Ավետիսյան, Ա.Տոնոյան, Ք.Առաքելյան, , Ա.Թումասյան,Ա. Տեր-Մինասյան, Գ.Ղուկասյան, Ջ.Կարապետյան Մ.Դավթյան, Բ.Ենգիբարյան)

Ձեռնպահ՝-0,

Դեմ՝-0

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, 25-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, գնումների վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության պահանջները, «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 10-րդ ենթակետը, «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն որպես ՇՊՀ հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձ (աուդիտոր):

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լ. Բաբսեղյան _____

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ Ա. Վալեսյան_____